# Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի N 1008-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

« » ---------------- 2019 թվականի N -----------Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 1008-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի «**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին»** N 1008-Ն որոշման N1 հավելվածի«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի շենքեր» և ««Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի Շենգավիթի և Կարմիր բլրի մասնաճյուղերի շենքեր» բառերից հետո լրացնել համապատասխանաբար հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ՝ «Տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայության շենք» և ««Հատուկ կացարան» ՊՈԱԿ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: